

Է Հ Ա Ր Ա Յ Ա

Օ Ր Ա Գ Ի Ւ Ը Ն Ա Ն Ե Կ Ա Ն

Թ Ա Ռ Ա 17.

1863

Զ. Հ Ա Տ Ո Ւ

Մ Պ Ո Ւ Ե Ս Ս Կ Ա Ն

Անցեալ տարհան լուսոնի համաշխարհական արուեստից տեսարամին փրաց ընդհանուր տեսովին:

Երտարանաց զանազան մեքենաներու եւ գործիքներու պերճ ու բազմաժիւղ մասին վրայ, որն որ արուեստից տեսարանին եթեներորդ բաժինը կը կազմէր, երկայն հասուածներ, մանաւանդ թէ մեծ

հատոր մը կրնայինք գրել. սակայն էջերնոււ անձկութեան համար հարկ է որ հոս անթիւ անհամար բազմութեան մէջէն միայն մէկ քանի ամենէն երեւելին յիշատակելով գոհ ըլլանք: Հոս արուեստաւորին համար գրեթէ ամէն մէկ առարկան զարմանալեաց ու հետաքրքրութեան նիւթ էր: Գերմանիայի մեքենաներն ու գործիքները եթէ թույց շատութեամբ չէ, գոնէ շինուածքին որպիսութեան կողմանէ՝ Անգղեայիններուն դիմացը կրնային ելլել: Պերլինի մեքենաներու գործարանները կրցածնուն ու պահանջուածին չափայացն էին, նյոյն քաղաքէն յիշելու արժանի է շոդուվ մուրճ մը, վեհենային Սիկլ անուանի կերտարանապետին խաւրած վիմագրութեան մամուլը: Ըքեղ ժագարտեան մեքենաներ հանդէս հանած էր Վեհենացի Ծբամ անուն մեքենապետը: Խսկ մզելու արուեստագործ կազմաներ խաւրած էր Փարիզի Գայլ (Gail) գործարանապետը, նյոյնպէս առանձին յիշատակութեան արժանի են Գաղղիայէն եկած ուռկան ու ցանց հիւսելու մեքենաները, սղոցները եւ այլն: Կարելու մեքենաներու արտաքս կարգի բազմութիւն մը հանդէս հանուած էր, որն որ նյոյն մեքենաներուն հիմայ տնտեսական կենաց ու ընտանեաց համար ստացած մեծ ծանրակշռութեան եւ հետզետէ կատարելագործուելուն ակներեւ ապացոյն է: Աս ճիւղին մէջ բոլոր միւս աղքերէն գերազանց են Ամերիկացիք, որոնք նաեւ նյոյն առաջին անգամ գտնելու պարծանելն իրենց կը սեպ-

հականեն: Ամենէն անուանի է, Պրիմբըրդ քաղաքին Ռիսըրն կերտարանապետին գործատունը, ուր շինուած կարելու մեքենաները, թէ իրենց պարզութեան, թէ շքեղութեան ու թէ հաստատութեան համար մեծ անուն ստացած են:

Անգղեա մեքենաներու բաժնին մէջ ամենէն շատ ցցց տեսքի հանած էր, որոնց մէջէն հետեւեալ նշանաւոր իրերը միայն կը յիշատակենք: Բամբակ մանելու մեքենաներ ու դաստաճաղներ. ձիու մազ գզելու մեքենայ մը, կէն ու Ռոս մեքենապետներուն շոգուլ կրկին մուլճը, կօշիկ ու հողաթափ շինելու մեքենան, գործիք մը միսքաշ շինելու, որոնցմէ Անզիա ամէն օր միլիոնաւոր կը գործածուի, վերջապէս Շմիտին ներկնածովեան հեռագրոյ պարան շինելու մեքենան: Կրնայինք աս ցանկը կրկնապատկել ու երեքպատկել. սակայն ընթերցողաց ձանձրութիւն չպատճառելու համար՝ կ'անցնինք ութերորդ կամ բուն մեքենաներու բաժնին, որն որ արուեստից տեսարանին ամենէն հետաքրքրական ու տեսնելու արժանի մասն էր, եւ որուն մէջ քիչ մը երկայն մաշլու միտք ունինք:

Աս բաժնին մեքենաներն ընդհանրապէս երեք դաս կրնանք բաժնել. Ա. Հաստատուն կեցող շոգու մեքենաներ. Բ. Փոխադրուող կամ տեղաշարժ (locomobile) մեքենաներ. Գ. Քաշող մեքենաներ: Աս բաժնին մէջ 455 հանդիսահաններ Անգղեայի մեքենականութեան հրաշալի ցցցերը հանդէս հանած էին, որոնց մէջէն կը յիշատակենք միայն Ռւէնհրու գործարանապետէն շինուած տասը ձիու զօրութեամբ շոգու մեքենան, որուն մէջ նյոյն իսկ ջերմացած օդին տարածական զօրութիւնն ուղղակի մեքենան շարժելու կը գործածուէր. Նյոյնպէս շատ զարմանալի էր շոգու մեքենայի մը ապակեայ օրինակը, որն որ կը բանէր, եւ ամենայն ճշդութեամբ շոգու մեքենայի մը յօրինուածքը կը ներկայացընէր: Գաղղիա ալ շոգու մեքենաներու շքեղ օրինակներ հանդէս հանած էր, որուն մէջ ամենէն մեծ պարծանքն ընդունեցաւ Փարիզի Գայլ անուն կերտարանապետ: Գերմանիայի մեքենաներուն ցցցն ալ վերիններէն վարչէր մնար, թէպէտ եւ խիստ քիչ օրինակ հանդէս

հանուած էր, այնպէս որ ամենեւին նցյն երկրին մեքենականութեան հիմակուան վիճակը ցուցընելու ի վիճակի չէին: Բանէ հասկրցողներուն ընդհանուր դատաստանին նայելով, ամենէն ընտիր շոգւց մեքենաները՝ Պրուսիային եկածներն էին: Շուէտի մեքենականութիւնն ալ վեց վարպետ գործուած շոգւց մեքենաներով ներկայացուած էր:

Աւելի բազմաթիւ էին, տեղաշարժ (locomobile) մեքենաները: Մինչեւ հիմայ արուեստից տեսարաններու մէջ չտեսնուած բաներէն մէկն էին հասարակ ձամբաներուն վրայ գործածուող քաշելու կամ վայրաշարժ մեքենաները: Ասոնք անոր համար աւելի մագրութեան, արժանի են, որովհետեւ հետզիւտէ ամեն տեղ մեծ ընդունելութիւն կը գտնեն ու շոգեհառերու հետ մրցութեան կ'ելլեն:

Աս բաժնին զարմանալի մէկ մասը կը կազմէին շոգւց, ջրոյ եւ ուրիշ շարժիչ զօրութեանց տեղ բռնող զօրութիւն մը գտնելու զանազան փորձերը: Շարունակ եղած փորձերէն կ'երեւայ թէ շոգւց մեքենան հիմայ հասած բարձր կատարելութեան մէջ ալ, արուեստաւորին ամէն պահանջմանց չի համապատասխաներ: Այսու ամենայնիւ շատ դժուարաւ կրնայ յաջողել շոգւց զօրութեան հաւասար ուրիշ զօրութիւն մը գտնել: Կ'ոյն իսկ տապաշարժ մեքենան (machine calorique), որմէ արուեստից տեսարանին մէջ չորս հատ կը տեսնուէր, իսկզբան վրան եղած յուսց չհամապատասխանեց, վասն զի հաղիս երկու ձիու զօրութիւն կրնայ յառաջ բերել: Պերլինի տապաշարժ մեքենաներն ամենէն աղլէիներն են, ափսոն որ կրակի վախին պատճառաւալ նցյները բանեցընելը թոյլ չէր տրուած: Իսկ կազմաշարժ մեքենաները կրակի ամենեւին վասնդ չըլլալուն համար՝ գրեթէ միշտ գործողութեան մէջ էին: Ակայսին ասոր համար ալ տապաշարժ մեքենաներուն վրայ ըսածնիս կրնանք ըսել, վասն զի աս ալ երկու ձիու զօրութենէ աւելի չիկրնար յառաջ բերել: Կ'երեւայ որ աս երկու մեքենաներն ալ թէ աժան ձեռք բերուելուն եւ թէ քիչ վառելի նիւթ սպառելուն պատճառաւ ժամանակաւ ստորին արուեստաւորներու քով մուտք պիտի գտնեն:

Ուրիշ զարմանալի երեւցիթներէն մէկն էին, նաեւ ելեկտրական մագնետական զօրութիւնն իրերեւ շարժիչ զօրութիւն գործածելու փորձերը: Վեց հատ տարբեր շինուածքով աս տեսակ մեքենաներ տեսքի հանուած էին, մէկ հատը Փարիզէն, իսկ միւսներն Անդիլյայէն. սակայն ամենէն աւելի ամենուն մտադրութիւնը շարժեց Հըրոի գործարանապետին ելեկտրամագնիսական վայրաշարժ մեքենան:

Եթէ մէյ մը աչուրնիս մարդուն չնարագիւտ հանձարէն ծնած ու մարդկային ազգին համար մատուցած ծառայութեանց կողմանէ մեծամեծ գովութեանց արժանի մեքենաներուն վրայ գարձընելու ըլլանք, զարմանալի կազմաներ առջեւնիս կ'ելլեն, ու

րոնցմէ մէկն է Պերլինէն խրկուած ձակնդեղէ շաքար շինելու մեքենան, էրկոյ Գաղղիացւոյն գինի զտելու մեքենան, որն որ իր սեռին մէջ առաջննն է, ու Լոնտոնի աղիւս շինելու գործիքը: Առանձինն ու մասնաւոր յիշատակութեան արժանի են, Պերլինի մզելու մեքենաները, որոնց քովը կրնար արժանապէս կենալ Նորմանտիին ծովու ջուրն առողջաբար ու թարմ ըմպելի ջուր ընելու մեքենան: Աս ետքի մեքենան որուն նաւագնացութեան համար ունեցած մէծ օգուտը խօսքով չիկրնար բացատրուիլ, չէ թէ միայն ծովու ջուրը կը զտէ կը մաքրէ, այլ նաեւ նյոնին ածխոյ թթու եւ կիր կու տայ, զորն որ ամէն ըլլապելի ջուր իր մէջն ունի:

Մեծ ընդունելութիւն գտաւ նաեւ Վիեննայի Տինկլը մեքենապետին ջրհանը եւ գինի ճղմելու մեքենան: Առաջնին կազմաճքը բոլորովին նոր ու զանազան առաւելութիւններ ընդունած է, ի մէջ այլոց մեքենային ամէն մասերը հաստատուն մետաղ (stéreloméiale) ըսուած երկաթէն շինուած են, որն որ հրաշէկ եղած ատեն՝ պղնձի պէս կը ծեծուի, ուստի եւ զարմանալի խտութիւն ու դիմացկունութիւն ունի: Ամերիկայի գոնսէգիգիգը գաւառէն քար կոտրելու մեքենայ մը խաւրուած էր: Հելուետիայի ֆրառէնիլա քաղաքէն եկած թուղթ ծալլելու մեքենայ մը, կարելու եւ ողորկելու կազմածով մէկտեղ, զարմանալի ճշգութեամբ ու շուտութեամբ կը գործէր, եւ գրեթէ միշտ իր չօրս կողմն ամրաւ հանդիսաատեներու բազմութիւն մը կը ժողվէր: Սակայն անկէ աւելի մեծ հետաքրքրութիւն զարժմոյց Ապագուտեան կենդրոսախոյս (Centrifuge) ջրհանը, որն որ արգէն 1851ին արուեստից տեսարանին հրաշլիքներէն մէկն էր: Կ'ոյն ջրհանը՝ 18 մատնաչափ հաստ երկու գլաններ ունեցող շոգւց մեքենայով մը կը շարժի: Զուրը 6 սոնաչափ տրամագիծ ունեցող խողովակի մը մէջէն վեր կը մղուի, ու ետքէն 12 ոտք լցոն բերանէ մը անընդհատ աշագին ջրվէժի մը նման աւազանի մը մէջ կը թափի, ուսկից ջրհանը ջուրը դարձեալ գէպ ի վեր կը մղէ: Սակայն աս տեսակ ջրհաններն արտաքրոյ կարգի մեծ շարժիչ զօրութիւն կը պահանջեն, եւ ջուրը միայն միջակ բարձրութիւն կը պարագաներ վեր հանել, ուստի եւ աւելի շիտակ տեղերէն ջուրը պարագելու կը գործածուին:

Կ'ոյնպէս շատ մեծ մտադրութեամբ կը վնասուէին արուեստական սառցաց շինելու երկու մեքենաները, որոնց մէջէն Սիակ անուն գործարանապետինն ամենուն մտադրութիւնը գրաւեց: Արուեստից տեսարանին մէջ բան մը այնպէս մեծ հետաքրքրութիւն չզարժացու ու վրան այնչափ չխօսուեցաւ, ինչպէս վերցիշեալ մեքենան: Հաղարաւոր մարդիկ նոյնը գրեթէ միշտ կը պատէին տեսնելու համար, թէ ինչպէս ամարուած ու շոգւց սաստիկ տաքութեան գէմ մէջ ջրափակ զուտ ու մաքուր ջուրը շարունակ բիւրեղացած սառուցի կտորներով գուրս կ'ելլեր: Մե-

քենան շոգւով կը շարժէր՝ օդահանի մը միջոցով արտաքս կարգի արագութեամբ ծորելի ածխոյ թթուն գոլրշացընելու համար, որով գրեթէ անհաւատալի ցրտութիւն յառաջ կու գար, որն որ եղած փորձերուն համաձայն սառելու կէտէն 140 աստիճան վար կրնայ իջնալ: Գոլրշացման յառաջ բերած զարմանալի ցրտութեան աստիճանովը, հասարակ աղի լուծուած մը զըցէն քանի մը ցրտութեան աստիճան վար կիջեցուի, բայց առանց սառելու. նոյնը ետքէն խողովակներու միջնորդութեամբ ջըց մէջէն անցնելով՝ զանիկայ անմիջապէս սառուցի կը դարձընէ: Կոյն միջոցին շոգւյ մեքենան ճնշումով մը կազակերպ մարմինը դարձեալ ծորելի մարմնոյ կը դարձընէ, որով յառաջուան գործողութիւնը նորէն կը կրնաւի: Թէպէտ եւ աս զարմանալի մեքենան նորերս գտնուած է, սակայն սկիզբը շատ ժամանակ յառաջ ծանօթ էր, այնպէս որ ասկէ քանի մը տարի յառաջ նադերէր Վեհեննացին սառուց շինելու կազմած մը շինած էր, որուն ճիշդ նման է Սիսեան մեքենան: Աս մեքենան եւրոպայի համար այնչափ մեծ ծանրակշռութիւն չունի, վասն զի չկայ տեղ մը ուր մինչեւ հիմայ ծանօթ եղած կերպերով չկարենան սառուց պահու ուստի եւ նոյնն աւելի տաք ու միջօրէականին տակ ինկած երկիրներուն համար կրնայ օդուտ ունենալ:

Պէտք շարունակուել:

—♦♦—

Ա Ռ Ե Ւ Տ Ք Ա Կ Ա Ց

Հարակային պառողներ: — Դ. Ջիմաստուդ, Ջիմ:

Դ. Ճենովայի ձէթը, որն որ երեք տեսակ կը բովանդակէ: Առաջինն ու ամենալաւը՝ Աղնիւ կամ կարմիր ձէթ (Oglio fino, rosso), երկրորդը՝ Միջակ աղնիւ (Mezzo fino) ձէթ, իսկ երրորդը՝ կերակրոյ հասարակ ձէթ (Comune mangiabile) կ'անուանուի: Ճենովայի ձէթն իր աղէկութեամբն անմիջապէս բրովանսի տեսակէն եաբը կու գայ:

Դ. Լուգդայի ձէթը, որն որ ըստ մեծի մասին շատ աղնիւ կը լայ: Դեղնի զարնող ճերմակ գոյն եւ ճենովայի աղնիւ ձէթէն աւելի ճարպոտ համ ունի, անոր համար շատ տեղ անկէ վեր կը համարուի:

Ե. Գոսդանայի ձէթը, որն որ Լուգդայի տեսակին կը հաւասարի, մանաւանդ Պուդի ու Գալլի հովիտներէն ու Բիզայի քովերէն ելածը, որն որ թափանցիկ, պայծառ եւ բաց դեղնի գոյն ու շատ աղնիւ ճաշակ ունի: Գոսդանային տարին 15 մլրդն ֆունտ ձէթ կ'ելլէ:

Զ. Նէապոլայ ամէն գտառներուն մէջ ձիթենին կը մշակուի եւ հիւսիսային Եւրոպայի արտաքս կարգի առատ ձէթ կը մատակարարէ: Նէապոլոյ ձէթը շատ տեսակներ կը պարունակէ, որոնց անուանիներն ասոնք են: 1. Լէշէի ձէթ, որն որ թափանցիկ գեղեցիկ դեղնի գոյն ու տկար հոս ունի: — 2. Բուլլայի ձէթը, որն որ պայծառ դեղնի գոյն ու սուր ճաշակ ունի: — 3. Գա-

լապրիայի ձէթը, որն որ Բուլլայի տեսակէն ստորին է, կանաչի զարնող գոյն եւ սուր հոս ու ճաշակ ունի: շատ անգամ ալ պղտոր ու թանձր կ'ըլլայ:

Է. Սիկիլիայի ձէթը, որն որ թանձր ու պղտոր է, կանաչի զարնող գեղնի գոյն եւ սուր հոս ու համ ունի: Սիկիլիայի ձէթն ամենալաւ տեսակներուն կարգը կ'ըլլար, եթէ ձիթենուց մշակութեան ու ձիթապտուղն աղէկ քաղելու եղանակը սորվէին:

Ը. Սարդինիայի ձէթը հիմայ շատ լաւ է. գեղեցիկ բայց դեղնի գոյն ունի եւ իր զուտ ու ընտիր ճաշակովը ձենովովը ու Գոսդանայի տեսակներէն վար չիմնար:

Թ. Յոնիական կղղիներէն շատ առատ ձէթ յառաջ կու գայ, որն որ թրիէստ, Վենետիկ, Լիվոնիա ու Անդղիա կը խարսուի: Յոնիական ձէթը զանազան տեսակներ կը բովանդակէ, որոնց երեւելիներն ասոնք են: 1.

Բաքսոյի ձէթը, որն որ գեղեցիկ բաց դեղնի գոյն ու անցյ եւ հաճցական ճաշակ ունի: Աս տեսակը Յոնիական ձէթերուն ամէնէն աղնին է, եւ Լուգդայի տեսակին կը հաւասարի: — 2. Գորփուի ձէթը, որն որ բաց դեղնի գոյնով է, բայց յաճախ անգամ սուր ու այրիչ համ եւ զօրաւոր հոս կ'ունենայ: — 3. Սանդա Սաւրայի ու Խթագայի ձէթը, որն որ Գորփուի տեսակին որպիսութիւնն ունի: — 4. Գեֆալինիայի ձէթը, որն որ Գորփուի տեսակէն ստորին է ու մինակ աճառի եւ ուրիշ գործատանց մէջ կը գործածուի, սակայն հիմայ ձիթապտուղն աւելի զգուշութեամբ ճզմելով՝ կերակրոյ համար լաւ ձէթը, մը մատակարարէ: — 5. Զանդայի ձէթը, որն որ Գորփուի, Գալապրիայի ու Սիկիլիայի տեսակներէն վեր կը դաստի: պայծառ դեղնի գոյն եւ քաղցր ու հաճցական ճաշակ ունի:

Ժ. Արքիակեղագուսէն եւ մեծաւ մասամբ Փոքր Ասիայէն կերակրոյ համար ընտիր ձէթի տեսակ մը կու գայ, որն որ առեւտրի մէջ Արեւելեան ձէթ կ'անուանուի: Աս ձէթն աղօւոր դեղնի գոյն ու աղնիւ ճաշակ ունի, եւ գրեթէ ճենովայի ու Գոսդանայի տեսակներուն կը հաւասարի: Յունաստանի կղղիներէն տարին 500,000 հոխայ ձէթ կ'ելլէ, որոնց մէջէն Կաբսասի, Սեփանդայի, Ամորկայի ու Կիսի տեսակները շատ ընտիր են:

Ճ. Ալպանիայի ծովելերէն, գլխաւորաբար Բրէվէզայէն, Բարկայէն ու Վանիցայէն եկած ձէթը՝ իր ընտիր ճաշակն ու պայծառ դեղնի գոյնով Սորեայի տեսակը կը գերազանցէ, եւ կերակրոյ ամենէն աղնիւ ձիթերէն մէկն է:

Ժ. Գաղմասարայի ինչպէս նաեւ Ռակուզայի ու Խափայի ձէթը, կանաչէկ գոյն եւ քիչ մը սուր ճաշակ ունի, գորեթէ բարկայէն ու Վանիցայէն եկած ձէթը՝ իր ընտիր ճաշակն ու պայծառ դեղնի գոյնով Սորեայի տեսակը կը գերազանցէ, եւ կերակրոյ ամենէն աղնիւ ձիթերէն մէկն է:

Ժ. Գաղմասարայի ինչպէս նաեւ Ռակուզայի ու

Խափայի ձէթը, կանաչէկ գոյն եւ քիչ մը սուր ճաշակ ունի, գորեթէ բարկայէն բուլլայի տեսակին կը հաւասարի:

ԺԴ. Սպանիական ձեթը շատ տեսակներ կը պարունակէ, որոնք հասարակօրէն ոռոր ձեթապաղց համ ու կանաչի զարնող գեղին գոյն կ'ունենան ու քիչ մը պղղոր կ'ըլլամ: 1. Վալենիայի կամ Ալիդանիկի ձեթը, որն որ կանաչ գոյն ու յատուկ ոռոր ճաշակ ու հոտ մը կ'ունենայ: — 2. Մալակայի կամ Կրանատայի ձեթը, որն որ նախընթաց տեսակէն լաւագոյն ճաշակ ունի, եւ աւելի եղու է: Մալակա քաղաքին շրջանակներն եօթը հարիւրէն աւելի ձեթի աղօրէք կայ, որով Անդղեայի, Հոլանտայի եւ Համզպորկ, Պրեմէն ու Շգեղին քաղաքներուն հետ աղէկ առուտուր կ'ընէ: — 3. Մելիենայի ձեթը՝ առաջին երկու տեսակներէն աւելի գեղին գոյն ու ընտիր ճաշակ ունի: Աս ձեթը Ճենովայի ամենալաւ տեսակներ կը հաւասարէր, եթէ աղէկ դարձնուէր:

ԺԵ. Մայորդա կղզեցն վրայ ձեթենւց մշակութեան ու ձիթապաղովը քաղելու եւ ճղմելու ատեն մեծ խնար կը տանին: Թէ, եւ աս տեսակը պղղորի ձիթապտուղներէն կը հանուի, սակայն բրովանսի ձիթապաղցն պէս հիւթեղ են եւ ասոնց ձեթը՝ Սպանիայի ամէն տեսակներէն վեր է:

ԺԶ. Ֆորդուկալի տեսակը՝ կանաչ գոյն ու Սպանիայի ձեթին յարդն ունի, բայց երբեմն ալ անկէ լաւ կ'ըլլայ:

ԺԷ. Մարտդոցի, Ալէքրի, Դունուզի ու Դրիբուլի ծովեղելքն ելած ձեթը, Եւրոպական առեւտրի մէջ Ափրիկէի ձեթ կ'անուանուի, եւ հասարակօրէն շատ լաւ կ'ըլլայ ու գեղին գոյն կ'ունենայ:

Ձեթ գնելու ատեն, պէտք է նայիլ որ պայծառ, թափանցիկ, գեղեցիկ բաց գեղին գոյն, ընտիր եւ անոյշ ճաշակ ու համայական հոտ ունենայ: Ջրով, մրրով եւ կամ ուրիշ բանով խառնուած չլլայ: Թանձր, պղղոր ու աղտոտ ձեթը, հնչպէս նաեւ մութ կանաչ գոյն, բորբոսի եւ կամ ուրիշ անհամայ հոտ եւ ոռոր ու այրիչ համ ունեցովը, անպիտան է ու ոչինչ կ'աժէ:

— Ձեթը շատ անգամ, կամ մեկնի եղով, ինչ պէս որ Գաղղիա կ'ընեն, եւ կամ ուրիշ հունտերու եւ զով կը նենգեն: Խարդախութիւնն իմանալու համար ձեթն ապակիէ շիշ մը մէջ պէտք է լեցընել եւ ուժով մը յնցելէն ետեւ՝ քիչ մը ժամանակ թողուլ որ հանդարտի. եթէ զուտ ձիթապաղց եղ է, ձեթին երեսն ու զորկ կ'ըլլայ, իսկ եթէ մեկնի եղով խառնուած է՝ երես որ պղղջակներով կը լեցուի:

— Ձեթն երկայն ժամանակ պահելու չէ, ինչու որ չեղիմանար, ամենէն աղնիւ տեսակները՝ հաղիւ երեք տարի, իսկ հասարակ տեսակները՝ հասարակօրէն քիչ անդամ մէկ տարիէն աւելի կը դիմունան: Ամենէն երկայն գիմացով Նիցցայի ու Խիֆ տեսակներն են, Խիֆն առանց միասու Արեւելեան ու Արեւմեեան Հնդկաստան եւ ուրիշ խիստ տաք երկիրներ կը խարսուի ու չ'ապականիր: Մէկալ աղնիւ տեսակները, ինչ պէս Գոսդանայի, Լուգայի ու Ճենովայի ձեթն եւ այն, այրեցեալ գօտուցն տակ ինկող երկիրներուն մէջ կ'ապականին, եւ նոյն իսկ խտալիայի մէջ տարի մը մինակ կընան գիմանալ:

— Ձեթը զով ու մաքուր մատանսերու մէջ պիտի պահուի:

— Հին ու բորբոսի հոտ ունեցող ձեթը լսաւցընելու համար՝ պէտք է աղեծուր կամ ձեթին չափով պարզ ջուր մէջ լեցընել ու կրակի վրայ դնել. Եռալու սկսած ժամանակ ձեթին երեսին վրայ ելած աղտոր մէկդի առնելէն ետեւ՝ պաղած ձեթը մաքուր ամաններու մէջ կը լեցուի. կամ աւելի պարզ հետեւեալ կերպավ ալ կրնայ ըլլալ. անպիտան ձեթը վարի կողմը ծակ ունեցող ամանի մէջ լեցընելէն ետքը՝ նոյնչափ ալ տաք ջուր կը դրուի ու զօրաւոր կը խառնուի. 24 ժամ անցնելէն վեր ջը հանդարտած ձեթին ամանին ծակը կը բացուի, ուսակ կից աղտախառն ջուրը դուքս կը վազէ:

— Զիթենին խիտ, հաստատուն, դիմացիւն, դեղնկեկ գորշ կարմիր գոյնով փայտ ունի, որն որ փութենէ ու որդէ չիվնասիր. դարձեալ հիւմութեան շատ յարմար է ու սիրուն կը փայլեցուի:

Ա Ճ Ի Ա Բ Ք Հ Ա Գ Ք Ա Կ Ա Խ

Արշանան հեռագիր:

Խւրոպա Ամերիկայի հետ ներքնածովեան հեռագրական պարանով մը միացընելու գաղափարը, առաջին փորձերուն անյաջող ելք ունենալէն ետեւ ալ, ոչ Անդղեացիք եւ ոչ Ամերիկացիք մէկ գի թող տուած են: Անցեաները Ալանտեան հեռագրական ընկերութեան անդամներն եւ ուրիշ բաղմանթիւ հանձնարարուեսուներ ու գիտականներ Լոնտոն ժողովը մ'ըրին, որուն վրայ հետեւեալ տեղեկութիւնները հրատարակուեցան:

Անդղեացի ու Ամերիկայի մէջ 1858ին շնորած ներքնածովեան հեռագրական պարանը շատերուն առանց պեղական բան մը կ'երեւայ, եւ միշտ կը տարակուսին որ արգեօք իրաք անոր միջնորդութեամբ հեռագրական լուր մը խաւրուած է: Սակայն հաստատ ու աներիկացիլ ճշմարտութիւն մըն է, որ հեռագրական պարանին գործածութեան մէջ եղած ատեն, չէ թէ միայն հեռագրական լրեր, այլ նոյն խիկ ըստ բաւականին ծանրակշիռ պատգամաւորութիւններ անով կատարուեցան. ինչպէս է Անդղեացի ժագուածուհուն ու Միարանեալ նահանգաց գահերեցին փոխիսակի ողջունատրութիւնը, Եւրոպա ու Արաբիա շողենաւերուն իրարու զարնուելուն լուրը, Ճընդեկաստանի ապստամբութեան նուածուելուն աւետիքն եւ այն:

Հեռագրիր 1858ին Օգոստոսի 10էն մինչեւ Սեպտեմբերի 1 գործածութեան մէջ էր, եւ աս 21 օրուան միջոցին մէջ 270 հեռագրական լրեր, որոնք 2885 բառէ կամ 13,900 գրէ կը բաղկանային, Ամերիկային Եւրոպա խրկուեցան. նոյնպէս ասկէ 1474 բառէ կամ 7000 գրէ բառկացեալ 129 հեռագրական լրեր հոն խաւրուեցան:

Նոյն հեռագրին ապականնելն վեր, գիտութիւնն առ մասին մէջ այնպիսի մեծ յառաջադիմութիւն ըրած է, որ հիմայ սազդ ու ապահով յաջող յաջող ելքի մը կրնայ յոյս ունեցուիլ: Աս հակայաձեւ Ալանտեան պարանը

1600 անդղիական մղնն երկայնութիւն ունի, եւ տեղ մը մինչեւ 2400 ձողաշափ խորութեան կը հասնի: Մինչեւ հիմայ գործածութեան մէջ եղաղ ներքնածովեան հեռագիրներուն մէջ, Դուլմնի եւ Ալճերիի մէջինը, երկայնութեան կողմանէ, Ատլանտեան հեռագրէն անմիջապէս ետքը կու դայ, վասն զի 600 անդղիական մղնն երկայնութիւն ու գրեթէ 1542—1755 ձողաշափ խորութիւն ունի: Ուստի եւ ծուռ ու սխալ է անսնց կարծիքը, որոնք կը համարին թէ ներքնածովեան հեռագիրն անկարելի բաներէն մէկն է: Ընդհակառակն Դուլմնի ու Ալճերիի մէջ դրաւած ներքնածովեան հեռագրին վրայ տեսնուած յաջող ելքէն յայտնի կ'երեւայ որ մարդուն հնարագիւտ հանձարն աս արուեստին մէջ ալ միշտ նորանոր գիւտեր ընելու վրայ է, ուստի եւ հիմայ ապահովապէս կրնայ այնպիսի հեռաւոր ներքնածովեան հեռագիրներու ձեռք զարնուիլ, որոնք քանի մը տարի յառաջ ցնորական եղերուաքաղներ կ'երեւային :

Առաջին ներքնածովեան հեռագրոյն չյաջողելուն գլխաւոր պատճառն արտաքսյ կարդի փութալն եղաւ: Շուտ եւ մէկ անդամով լմբոցընելու բաղանքէն բորբոքած, հարկաւոր պատրաստութիւններն ու կարեւոր զգուշութիւններն ընելու հոգ չըրին: Սակայն հիմայ Անդղիայի մաշկահուզի (gutta - percha) ընկերութիւնը մէծ եռանդեամբ ու յարաւեւութեամբ նոյն նիւթը կատարելագործելու աշխատեցաւ, եւ վերջապէս յաջողուց նոյն նիւթին գլխաւոր պակասութիւնը, այսինքն ծակուտութիւնը, վերընել. ցուցաւեցաւ ալ որ մաշկահուզին վրայ եղած ճնշումն որչափ որ զօրաւոր է, այնչափ մաշկահուզին աւելի կը կղզեանայ:

Ժողովրդին մէջ Ատլանտեան հեռագրական ընկերութեան վարիչները ծանուցին, որ անմիջապէս գործադրութեան ձեռք զարնելու միտք չունին, այլ հարկաւոր պատրաստութիւններն ըլլալէն ետեւ գործին սկիզբ պիտ'որ ըլլուի: Ուստի եւ անոր համար ընկերութեան վարիչները աւելութենէ ննդրեցին որ իրենց նաւեր տայ, Ավկիանուսին դիծն եւ ի մասնաւորի երկու աշխարհքներուն ծովեզները քննելու համար: Հին գիծը պիտի պահուի, վասն զի երկայն ու հասուն խորհրդածութենէ ետեւ՝ տեսնուեցաւ որ անիկայ ամենէն գործածականն ու պատհովին է:

Ընկերութեան վարիչները կ'ուզեն որ Անդղիայի տէրութիւնն ինք իր հաշունին գործէ, եւ բուն սկզբնական գաղափարնին զուտ անդղիական հեռագիր մը ընել. էր, որուն երկու ծայրերն անդղիական երկրի վրայ հաստատուին, եւ անդղիական աղբեցութեան ու իշխանութեան տակ ըլլայ: Բայց Ամերիկայի Միաբանեալ նահանգաց տէրութիւնը, ինք զինքը պատրաստ ցուցուց Անդղիայի հետ դաշնագրութիւն ընելու, որուն զօրութեամբ՝ երկու տէրութեանց մէջ պատերազմ՝ բացուած տաեն, հեռագրական պարանին չեղուութիւնը կ'ապահովուէր: Ամերիկայի գեռպանը, որն որ ժողովականաց մէջն էր, ըստ որ շատ պատճառներու համար աղէկ կ'ըլլայ՝ եթէ նախ Անդղիայի տէրութիւնը գործին սկիզբ ընէ: Կ'ոյնպէս

ծանոյց, որ իր տէրութեան կողմանէ լիակատար իշխանութիւն ունի ամէն կարելի օգնութիւն խոստանալու, եւ թէ Միաբանեալ նահանգաց տէրութիւնն Անդղիայի տէրութեան դիտաւորութեան վրայ կատարեալ վատահութիւն ու առաջ հասուն ու ծանր մտածութեան գործքի ձեռքը չեղարնուուիր:

Հեռագրական պարանը, զրն որ կլաս ու ելիս Պարոնայը ու ընկերը ընկերութեան տուին, եւ որուն գործածական ըլլալուն երաշխաւոր կենալու իրենք զերենք պատրաստ ցուցուցին, և պինձէ թելերէ շնուռածէ, որնոյ ամէն մէկը $1/16$ անդղիական մատնաշափ երկակտուը ունի. որոնք Գագդէրսընին բաղադրաւթեան մէջ թաթիւուած ու ջրախիտ եղած են: Բուն ելեկտրական թելեր կամ հաղորդիչը (conducteur) ամէն մէկ միզնի վրայ 50 անդղիական լիար ծանրութիւն ունի, եւ մէկ բովկի մէջ 60 գիր կամ 12 բառ Խրլանտայէն նոր ֆունտանա կրնայ հաղորդել:

Ելեկտրականութեան հաղորդիչը կղզիացընելու համար, վրան ութը պատահք կայ, չորսը զուտ մաշկահուզէ իսկ չորսը Գագդէրսընին բաղադրութենէն, որոնք զանազան գիրընվ քավէ քով բերուած են, եւ ընդամէնը $3/16$ մատնաշափ հաստութիւն ունին: Ամբողջ հեռագրական պարանը $9/16$ մատնաշափ երկակտուը ունի, եւ ամէն մէկ ծովային մղոնի վրայ, ելեկտրական թելեր կամ հաղորդիչն հետ մէկտեղ, 1060 անդղիական լիար կը կշռէ:

Կպրաձիթած կանեփր, որն որ մինչեւ հիմայ հեռագրական թելեր փաթթելու կը գործածուէր, աս անդամ դուրս պիտի թող տրուի, եւ անոր տեղ երեք անդամ ուլուուած ընտիր երկամբ թել պիտի գործածուի, որն որ ժանգուելէն ազատ մնալու համար՝ Գագդէրսընի բաղադրութեամբ ու մաշկահուզվ պատած է: Այսպէսով կը յուսացուի, որ կպրաձիթած կանեփրի չուանը մէկի թող տալով, կարելի կ'ըլլայ մաշկահուզին ամէն մէկ ծեղքերն իմանալ: Կպրաձիթը՝ որն որ արդէն ըստ մասին կղզիացընվունիւթ մին է, հաստրակօրէն առ ժամանակ մի ճնշուածները կը գոյէր, ու ետեւէն հեռագրական պարանին ծովուն տակը ձգուելէն ու գործածուելու սկսուելէն ետքը դուրս կ'ելլէր: Եւ որովհետեւ հիմակուան նոր կերպով շնուռած պարանը, վերին երեսին վրայ բոլորովին անապական ու ջրախիտ է, անոր համար ոչ ծովուն մէջ թող տրուելէն յառաջ եւ ոչ վերջը ապականելու վախ կայ, եւ ուղուած ժամանակ կարող պիտի ըլլան նոյնը ծովուն խորըէն վեր հանել:

Ուստի եւ Անդղիայիք հիմայ մէծ յուսոյ մէջ են, որ վերջապէս պիտի կարենան աս ներքնածովեան հեռագիրն աւ յաջողցընել, որով եւ թեթեւ մատի շարժմամբ մը 40 րոպէի մէջ աշխարհքիս մէկ ծայրէն մինչեւ մէկալ ծայրն իրարու համար հետ հաղորդակցութեան մէջ մանել:

ՊԱՏԱՍՏԱԿՆԱԿԱՐԱ

Մասնաւութեան մասից մը:

Լոնտանէն հետեւեալ զարմանալի գէպ.քը կը պատմէն: Ասկէ վեց ամիս յառաջ Ս. Մարտիրոսս կղզւոյն վրայ, Գլուդոմիր Գրենուա անուամբ հարուստ վաճառական մը, իր տան մէջ սպանուած ու զարհուրելի կերպով անդամատած գտնուեցաւ: Երեսն ատրմանակի հարուածով մը բոլորովին ջախջախուած էր, եւ ատրմանակը՝ որով անձնասպանութիւնն ի գլուխ համուած էր, քաղը գետինը կը կենար: Մօտ սեղանի մը վրայ նամակ մը կը գտնուէր, որուն մէջ հետեւեալ խօսքերը կային: Բոլորովն անանկացաց որիկայ մը 25,000 սկեռլինս գողցաւ ինծի միայն ամօթը մնաց, զորն որ չեմ կրնար կրել. . . . Կնոջս կը յանձնեմ որ մնացած ստացուածքս պարտատէրներուա բաժնէ, եւ Աստուծմէ, բարեկամներէս ու թշնամիներէս կը խնդրեմ, որ իմ անձնասպանութիւնս ինծի ներեն: . . . : Գլուդոմիր Գրենուա:

Աս գէպքին պատմառած այլայլութիւնն արտաքաց կարգի էր. այրի մնացած կինը տրտմութենէն վանք մը մտաւ, եւ ժառանգութիւնը կարգի գնելու հոգն իր երկան եղբօրորդւոյն յանձնեց, որն որ բժիշկ մին էր: Գողովութեան կասկածը՝ ուսկից անձնասպանութիւնը հետեւած էր, Ճոն Սուն անուամբ մէկու մը վրայ կ'իյնար, որն որ Գրենուային խանթի ստարան էր, եւ աս գէպքին պատահելէն քիչ մը ժամանակ յառաջ աներեւցիթեղած էր: Ասոր վրայ քանի մը ամիս անցնելն ետեւ՝ Ճոն Սուն գարձեալ նոյն կղզին գարձաւ: Տեղէն հեռաւալուն պատճառին վրայ հարցուելով, պատասխան տուաւ, որ իր յառաջուան տէրը զինքը Գաղղիա խրկած էր, ունեցած առնելիքները ժողվելու համար, որոնք ըստ ինքեան շատ հին բաներ էին. իսկ անոր՝ զինքը գողութեան յանցաւոր ամբաստանելը, պատրուակ մըն էր՝ անանկութիւնը գոյելու համար, որուն բուն յանցաւորն ինք տէրն էր:

Ասուլ բանը լմբնցած կը կարծուէր: Սակայն քանի մը ամիս ետքը, օր մը առտուանց ժամը հինդին Գուլ. Պուռնէ անուամբ մէկուն, որն որ անձնասպանին գլւասուր պարտատէրն էր, դուռը զարնուեցաւ: Գուռը բացուեցաւ, եւ ծառան եկաւ տիրովն իմացուց, որ օտարական մ'եկած է, հետք խօսիլ կ'ուզէ, սակայն ով ըլլալը չ'ուզեր յայտնել: Պր. Պուռնէ ոտք ելաւ եւ շուտ մը ընդունելութեան խացն երժաւալը, հոն բազկաթուի մը վրայ նստած, երեսը ետեւ դարձուցած մէկը գտաւ, որն որ Սուռնէն Բոստ լրազիրը մեծ մտադրութեամբ կը կարդար: Ինչով կրնամ ձեզի ծառայել, հարցուց Պր. Պուռնէ: Օտարականն երեսը դարձուց եւ զինքը բարեկամաբար բարեւեց: Պր. Պուռնէ զարհուրանաց ձայն մ'արձակեց: Գլուդոմիր Գրենուա, իր պարտասպանը, որուն յուղարկաւութեան ինք ներկայ գտնուած էր, հիմայ իր առշեւը կը կենար:

Թէ երկու բարեկամը մինչեւ կէսօր իրարու հետինչ խօսեցան, ընթերցադն ետքէն կ'իմանայ: Պր. Պուռնէ

նէ շատ անգամ տնէն կ'ելլէր, գատաւորին տունը կ'երաթար: Նոյն օրը Ճոն Սուն իր պարտէզը թէյ խմած առեւնուեցաւ ու բանտ դրուեցաւ: Դատաստանին առաջեւը գողութիւն ընելուն վրայ ամբաստանուելով, այս պիսի վստահութեամբ ու հանդարտութեամբ սկսաւ ծիծաղիլ, իրբեւ թէ բոլորովին անմեղ ըլլար, ամենեւին վախնալու բան մը չունենար: Երբ որ դատաւորն իրեն հարցուց թէ Պր. Գրենուային քովի ըրած գողութիւնը կը խոստովանի, պատասխան տուաւ թէ Աս ամբաստանութիւնը շատ անհամ է: Խօսքին վերջն աս ալ ըստ, թէ Անմեղութիւնն նոյն իսկ տիրոջն դիակին վրայ երդամբ կը նամամ հաստատել:

Աս խօսքին վրայ դատաւորը դուռը բանուլ տուաւ, եւ Պր. Գլուդոմիր Գրենուա ներս մտաւ: Բոլոր ներկայ գտնուողներուն վրայ ստրափ մը տիրեց, կանայք վախսան գացին: Ճոն Սուն ծնկուըներուն վրայ ինկաւ ու յանցանքը խոստովանեցաւ: Սակայն Ար Ճոն Ռւէսդ, ամբաստանութիւնը վախսաբանը, չուզեց իր պաշտպանելցն յանցանքը ճանչնալ: Վախսէն կորզուած խոստովանութիւնն իրբեւ ճշմարիտ չիկնար համարուիլ, կ'ըսէր, եւ դատաստանական ատեաններու մէջ պէտք չէ առերեւոյթ նմանութիւններէ խաբուիլ: Հարկ է որ ամբաստանողը ցուցնէ թէ ան անձն ամբաստանելցն տիրոջը հետ նոյն է: Ի՞նչպէս կրնայ ասիկայ գերեզմանէն ողջ ու անարատ երեսով ելլել, երբ որ շիրիմը զինքն ապականած երեսով իր ծոցն ընդունեցաւ:

Նոյն ատեն Պր. Գլուդոմիր Գրենուա իր պատմութիւնը պատմեց: Ամբաստանելցն ըրած գողութիւնն իմացած ատենս, ըստ, անիկայ արդէն շատոնց աներեւոյթ եղած էր: Տեսայ որ զինքը ձեռք բերելու ամէն միջոցներս պարապի պիտի ելլեն: Կործանուամն յայտնի աչքին առջեւը տեսայ, ուստի եւ որոշեցի որ կենացս վերջ տամ, որպէս զի աս նախատինքը չիրեմ: Ժամն իրիկուան ինն էր, ետքէն սեղանին վրայ գտնուած նամակն՝ անկէ քիչ մը յառաջ գրած լմբնցուցած էի, ատրմանակս լցուցի, բերնիս մնուեցոցի մէյ մ'ալ դուրս զարնուեցաւ: Ատրմանակը մէկու դրի, դուռը բացի: Մարդ մը ներս մտաւ, եւ տեսայ որ մեռելաթաղն է: Թաւերուն տակը մեռած մարդու մարդին մ'ունէր, որն որ իմ բժիշկ եղբօրդուոյս համար էր: Խոկըան այնպէս երեւցաւ որ ինծի պատահին իրեն այնչափ համոյական չէ: Եղբօրդիս աս դիակը քեզմէ ուղեց, հարցուցի իրեն: Զէ, Պարոն, պատասխանեց մեռելաթաղն: Երբեմն երբեմն կրյած ատենն իրեն կը բերեմ: Աստուծոյ սիրցն համար կ'ապաշեմ: Զի մի մասնէք, ապա թէ ոչ՝ գործքս ու հայս կը կորպանցընեմ: Աս միջոցն միտքս մէկէն խորհուրդ մ'եկաւ, մեռելաթաղն երկու ոսկի տուի, ու դիակը խուցս տարի: Մեռեալը ճիշդ իմ ձեւս ունէր. ձինորս մըն էր, զորն որ ընտանիքը քիչ ստակով վերը ըստուած վախճանին համար մեռելաթաղն ծախած էին: Զգեստները հանեցի, իմ զգեստներս իրեն հարցուցի, եւ լեցուած ատրմանակն երեսը պարպեցի, որով ըուլուզին անձանօթ մէկը դարձաւ: Անկէ ետեւ ծպտեալ

զգեստով Գաղղիայի նաև մը մոսյ: Ի՞նչ որ կ'ենթաւ գրէի, իրօք կասարուեցաւ: Սատարս մահուանս լուրն առնելով, ինք զինքն ապահով կարծեց. չէր գիտեր որ ինք Ս. Մաւրիոսի կղղոցն վլայ սնհոր ապրած ժամանակ, ես Գաղղիա ետեւէ կիյնայի, իմանալու որ ստակու ուր գրած է: Հիմայ ետ գարճայ, խաբէութիւնը յայտնելու եւ իմ ստացուածքս ետ պահանջելու համար: Ասոր վրայ դատասահնը զՃռն Մուն ցիւանս բանտարգելութեան դատապարտեց:

—♦♦—

Բ Դ Գ Ի Տ Ս Կ Ա Ն

Այեւայլ բնական երեսոյթներում շուծումը:

Զերմութեան ազգեցութիւնները:

Բ. Հաստատուն մարմնոց դարձումը:

418. Զերմութիւնն օդէն ու ջրէն վաստ ուրիշ մարմններն ալ կը տարածէ: — Այու ամէն մեզի ծանօթ մարմնները չերմութեամբ կը տարածին:

419. Ի՞նչ պատճառի համար տակառագործը տակառին վրայ երկաթէ շրջանակ անցուցած ատեն, նոյնը հրաշէկ կընէ: — Ա. Վասն զի երկաթը չերմութեամբ կը տարածի, ուստի եւ շրջանակն ալ հրաշէկ վիճակի մէջ աւելի կ'ընդարձակի, որով դիրութեամբ կրնայ տակառին վրայ անցութէ: Բ. Որովհետեւ երկաթը ցրաւութեամբ կ'ամփոփուի, ուստի եւ շրջանակն ալ պաղէլն ետեւ կը քաշուի, եւ տակառն աւելի զօրաւոր կը պնդէ (կը սիմէ):

420. Ի՞նչ բանի համար մէջը սաստիկ կրակ վառուող վառարանէն՝ շառաչելու նման ձայներ կը լսուին: — Վասն զի վառարանը չերմութեամբ կը տարածի, այնպէս որ վառարանին առանձին մասերն իրարու շփուելով կամ աղիւաներուն վրայ ճնշումը ընելով շառաչելու նման ձայն կը հանեն:

421. Ի՞նչ բանի համար վառարանը սաստիկ տարանալին ետեւ՝ նորէն պաղած ատեն, նոյնպէս շառաչելու ձայներ կը լսուին: — Վասն զի կրակն անցնելէն ետեւ, վառարանը պաղելով կը քաշուի, որով վառարանին մասերը դարձեալ իրարու կը շփուին, եւ աղիւաներուն հետ ունեցած կապակցութիւնին իսանգարի:

422. Ի՞նչ բանի համար վառարանի մը վրայի շաղան ու կիրը (կամ կաւը) շատ անգամ կը ճամթուի ու կը թափի: — Վասն զի մէջը կրակ վառարած ատեն, վառարանին երկաթի մասերն իրենց հետ կապակցութեան մէջ եղաղ աղիւակն աւելի կ'ընդարձակին, որով պատին աղիւաներն ու շաղան իրենց տեղին մէկդի կը հրեն. արդ կրակը մարելէն ետեւ՝ երկաթները դարձեալ կը քաշուին, իրենց աւաշին վիճակը կը դառնան, իսկ շաղակը մղուածած տեղը:

423. Ի՞նչ բանի համար շաղակը կը թափի վար կ'իյնայ: — Վասն զի շաղանին ու վառարանին երկաթի մասերուն մէջ պարապ միջոց կը մնայ, սրով շաղան իր հաստատութիւնը կորսնցնելով՝ իր յատուկ ծանրութեամբը վար կ'իյնայ:

424. Ուրիշ ի՞նչ պատճառի համար շաղակը վար կ'իյնայ: — Վասն զի կրակն չերմութիւնը ստէպ ստէպ փոխուելով, վառարանին մեծութիւնն ալ կը փոխուի. աս ընդարձակիւունը ու ամփոփուելուն պատճառառաւ շաղակը մէջն վէր կ'իլէ:

425. Ի՞նչ պատճառի համար օդը սաք եղած ատեն չերմաշափին մէջն մագիւը վէր կ'ելէ: — Վասն զի չերմութիւնը զնդիկը կը տարածի, որն որ հետեւաբար աւելի մեծ միջոց բռնելով, խողովակն մէջն վէր կ'ելէ:

426. Ի՞նչ բանի համար գաւաթը կը ճամթի երբ որ մէջը մէկէն սաք ջուր լցումներու ըլլանք: — Վասն զի գաւաթին մէջն տաքի տաք ջրէն դրէն դրսի դիմն աւելի շուտ կը տա-

բածի: Աս անհաւասար տարածման պատճառաւ գաւաթը կը ճամթի:

427. Ի՞նչ համար գաւաթին արտաքին կողմը տաք ջրէն ներսի երեսին չափ չընդարձակիր: — Վասն զի գաւաթը գէշ հաղորդութիւնն է, ուստի եւ ներսի երեսին չերմութիւնը դրսին հաղորդուելէն յառաջ գաւաթը կը ճամթի:

428. Ի՞նչ համար գաւաթի համար գաւաթը կը ճամթի երբ որ ներսի կողմը դրսին չափ աւելի տաք կ'ըլլայ: — Վասն զի գաւաթին միանին ներսի կողմը կը տարածի, իսկ դրսի կողմը չիտարածիր, որով իրարու հակառակ պայուղով զօրութիւն մը յառաջ կուգայ:

429. Ի՞նչ համար ջրոյ գաւաթի մը յատակը մարմնէն կը բաժնութիւնը բարձրանի ու տաք վառարանի վրայ դնելու ըլլանք: — Վասն զի ինչպէս լսինք, ապակին գէշ հաղորդութ ըլլարվածի գաւաթը մարմնութեամբ չափանիկ ամէն կողմնանէ հաւասարապէս տաքնակէն յառաջ, յատակը միան կը տաքնայ, եւ ապակին կը ճամթի:

Գ. Լուծել էւ հալցնել:

430. Լուծել կամ հալցնել ըսելով ի՞նչ կ'իմացուի: — Հաստատուն մարմնոյ մը չերմութեամբ հսսանուտ մարմնոյ փոխուելը: Այսպէս օրինակի աղագաւ, հաստատուն սառուցը արեգակն չերմութեամբը ջրոյ կը փոխուի:

431. Ի՞նչ բանի համար սառուցն արեւուն չերմութեամբը կը հալի: — Վասն զի արեւուն չերմութիւնը՝ սառուցն մասունքներն այնափ իրարմէ: կը հեռացընէ, որ ձգուական զօրութիւննեն, որով հաստատուն սառուցը ծորեւուլու:

432. Ի՞նչ պատճառի համար մեստազները ջրոյ տարութեամբը կը հալին: — Վասն զի չերմութիւնն անսոնց մասունքներն իրարմէ բաժնելով, ձգուական զօրութիւննին կը կորսնցնեն, որով հաստատուն սառուցը ծորեւուլու:

433. Ի՞նչ բանի փայտն ալ մետաղի պէս չիհալի: — Վասն զի կրակն չերմութեամբը փայտը կազի, ծխոյ ու մնիրի կը գաւանայ, եւ աս զանազան մասունքներն իրարմէ կը բաժնելին:

Դ. Շոէտոցուա:

434. Շոէտոցուա ըսելով ի՞նչ կը հասկցուի: — Հաստատուն կամ հեղուկ մարմնոյ մը շոգեայ փոխուելը. ինչպէս օրինակի աղագաւ ձիւնը կամ ջուրը արեւուն չերմութեամբը շոգեայ կը փոխուի:

435. Ի՞նչ բանի համար ջուրը կրակն չերմութեամբը շոգեայ կը փոխուի: — Վասն զի կրակը չոյն մնար մասունքներն շատ սպասիկ փշտիկներու կը բաժնէ, որով օդէն թեթեւ ըլլանք, իրեն շոգե վերին երեսէն կը հեռանան:

436. Ամպն ի՞նչ է: — Երկիրս գուրս ելած եւ ըստ մասին ոգոյ վերին գաւառներուն մէջ դարձեալ խտացած խոռնաւթիւն:

437. Մշուշն եւ ամպին մէջ ի՞նչ տարբերութիւն կայ: — Ամպն ու մէգն իրարմէ միայն մէկ նկատմամբ կը զանազանն. ամպիր բաւական բարձրութեամբ մեր վրայ կը ծածաւ նին, իսկ մէգն երկիրս երեսը կը շշափէ:

438. Ի՞նչ պատճառի համար ամպիրն օդին մէջ կը ծածաւ նին: — Վասն զի շատ պայտիկ գնդակներէ (փշտիկներէ) կը կայանան, որով օդէն թեթեւ ըլլարով, օճառափակիփուրի գընդակներու պէս օդին մէջ կը լողան կը ծածաւ նին:

439. Ի՞նչ բանի համար շղին երբեմն ամպ կը կազմէ ու երբեմն իրեն մշուշ երկիրս վրայ կը կենայ: — Ասիկայ օդին բարեխասներն կախում ունի երկիրս երեսն օդին ստորին կարգերէն աւելի ջերմ կ'ըլլայ, ան ատեն երկրէս գուրս ելած շոգին (ցուրս օդին միջոցով խտանալով) մշուշի կը գառնայ: իսկ եթէ ընդ հակառակին օդին ստորին կարգերն երես աւելի տաք կ'ըլլան, շղին օդին մէջն վէր կը բարձրա-

նայ: կը կազմէ ու ամպ կը կազմէ:

ԲԱՐՁՐԱՎԵՐ

ԱՐԱՅԻ ԿՈԶԻՆ

Անդիքական նաև երուն ետ քաշուիլը՝
Գաղղիցացւոց համար մեծ փառք էր. եւ
Աչիկին քաջ պաշտօնականիներն ու աներ-
կիւղ նաւաստիներն իրենց սրտին մէջ աս
միխթարութիւնն ունեին, որ ամէն մէկն
իր պարաբը կատարեց, եւ հայրէնեաց՝ ի-
րենց յանձնած աւանդն աղասեց:

Երբ որ յարկին փռայ ամէն քան կարգի
գրուեցաւ եւ պաշտօնակալներն իրենց քաջ
նաւապետին չըստ կողմն ժողվութ զնիքն
ստացած պարձանքին վրայ չնորդաւոր-
ցին, Էրմէնիսուր սեպուհն ալ ամէն մէ-
կուն քաջականիւնը կողմէլն եւ նորդակալ
ալլայն ետեւ, հրամացեց որ զիկիլիպպոս
առջեւը բերեն: Խաեղճ պատանին դոյնը
նետած, արիւնաթամբաւ, բայց հայտա-
տուն կեցուածքով մը նաւապետին առջեւն
երաւ:

Եթիտասարդ, ըստ իրեն նաւապետը,
այսօր պարտք կատարեցիր: Ունաց է որ
քեզի շնորհակալը ըլլամբ բարեկամի Սէնդ-
Ակ տեղապահին կեանքն երկու անդամ
մահուունէ աղասիելուդ համար: Պատե-
րազմին ժամանակը ցուցուցած քաջու-
թեանդ վըա ամենուն ըսածը զիս շատ
ուրախացուց: Յանցակներդ կը ներեմ,
ալ կրաս սովորական գործքերդ կատա-
րել. կը լուսամ որ այսօրուունէ սկսեալ
կարգաւորեալ վարժուունքովդ այնպէս ա-
նուն կը համես, ինչպէս որ մինչեւ հիմայ
յամանուութեամբդ ու անկարդ ընթացքովդ
ըրած էիր:

Փիկիվալու աշուրները դեպ ի նաւաս-
պետք գարձուց, եւ անոր երեսին վրայ ար-
գահատութեան ու բարութեան նշաններ
տեսնելով, սիրու մեծապէս շարժեցաւ
այսպիսի սիրալը վարմանքեն, զորն որ իր
թշնամեյն մօրեղջօրմէն չէր կընար յու-
սալ. ուստի եւ լարով մինչեւ այն ատեն
նախառաշճ կերպով վարուած ըլլալը խոս-
ութանեցաւ, եւ խօսք տուաւ եւ մէք-
չարկ ըլլայ՝ արիւն ալ յանձն կառնու-
թափել յառաջուան յանցանքները զնն-
չերու համար:

Ուղիմն, ըստ նաւագետը, թողութիւն խնդրէ Հսդէն կոմէն՝ անոր ըրած թշնամնացդ համար, եւ ամէն բան կը մտցուի, բաւական որ աս հիմայ դրած յառաջագրութեանդ վկայ միշտ հաստատուն կենաւ:

Ծնկան վրայ ձեզմէ թողործիւն կը
խնդրեմ, նաևապեստ, պատասխանեց Գիր-
լիպպոս, ձեղի պէս քարերար հրատանատա-
րի մը գէմ ելլերու եւ ձեր պաշտանակալ-
ներէն մէկուն զարնելուն համար: Բայց
..... Էսպէն կոմմէն չեմ կրնար թօ-
ղործիւն նսնդրել. որոյիշետեւ նախ անի-
կայ զիս թշնամնեց, նոյն իսկ առ նաւը
գայիշ շատ լաւածի:

էր, աս խօսքին՝ Փիլիպպոսին վրայ արհամարհողական հայեցուածք մ'արձակեց, ուրուն՝ պատանեցն աշուշներն ալ նոյն եղանակաւ պատասխան տռւին:

Խակ նաւագետը՝ սասակութեամբ մը
Թէկութիւն չեմ ուզիր, լսաւ, պայման
գնելը քեզի չինար: Ասկից ալ զատ
ի՞նչ բանի մէջ քեռորդիս կրնայ զքեղ
թշնամնանձ ըլլալ:

— Ինք՝ թէ որ կուզէ, անձամբ կընայ
ձեզի ըստ:

կերպայ թէ, կրիմեց սեպուհը, սա
դաշէդ յառաջ քօն եւ քեռորդուոյ մէջ
գտառութիւն մը մասած ըլլայ. բայց մինչեւ
հիմայ բռնած գէշ ընթացքդ ասով չե-
կինար արդարանալ:

Եթէ է դուն պարագի կատարած ըլլայ-
իր, ամէն մասդ հետոք քաղցրութեամբ եւ
ըստ պատշաճի վարուած կ'ըլլար: Որչափի
ալ զքեռորդին սիրեմ, չէր կրնար ինձի
իմ ստորակարգեալներուս գէմ անիրաւ-
ութիւն մընել տալ: . . . բայց ինչ
որ է նէ, զնա վէրքերդ կապել տուր, եւ
նայէ որ ասկէ վերջը վրադ գովութենէ,
զատ բան չլսեմ:

Φηλικόπου μετάρανορ ου τε κρατήστωντες
τοποθέτειντες οντιστικές προτίτινες φύγειν.

ԳԼՈՒԽ 2.

Հաղիւ թէ վաճառականաց ցրուած
նաւերը քովէ քովէ եկած մաջած էին,
Աշխի նաւն ալ պատերազմն մէջ ընդու-
նած վնասները նորոգած էր, մէյ մ'ալ ա-
նահի սոսկախ փրթարկի մը փրթաւ, որ
արգէն կէտ նորոգած անւըլ բոլոր-
մն պատահու մասնաւ մէջ ինչպէ:

զիս գայքայլուն զուագիր աւշ լուզաւ :
Կէս գիշերուան մօտ նաւն այնչափ ջուր-
առած էր, որ բօլոր նաւասավները սկսան
ջրհանճերը քայելու զբաղլել : Կէս գիշերէն
կամ առաջ առաջ առաջ առաջ առաջ առաջ

երկու ժամ՝ վերջը հովի քիչ մը մեղմացաւ
որով ամենքը սկսան սիրա առնուլ. կը
յուսացին որ փոթորիկը շուտով կը դա-
դրի: Բայց քիչ մը եաբը առջնէն աւելի
սասացաւ, եւ աս անգամ որոտուած
փայլակներով ու անձեռւով առօսն էր
Հովին ան սասիճանի սաստիկ էր, որ ստի-
պուեցան մեծ առաքանոր ծալլել: Կոյն
վայրիկնին ահազգին հովի հարուած մը նաշը-
մէկ կողմէն պատկեցուց, Նաւան անշարժ
կեցաւ, եւ անանկ կ'երեւար որ ա՛լ կարե-
լի չէ ազատի:

Զուըը նաւուուն մէջ սաստիկ շուտու-
թեամբ միշտ կը բարձրանար : Նաւապետ
հրամայեց որ մեծ կայմն ու առաջազդողման
կայմը կարեն, յուսալով որ կինայ աս ե-
ղանակաւ նաւուն ուղղութիւն : Առաջազդողման
կայմը տեղի տուու, առանց յուսացաւած
հետեւութիւնն ունենալու: Մեծ կայմն

ալ սոսկալի գղրդին հանելով նիշտա, ետք առաջալած ատեն՝ նաւում երկու կողմնական կայսերական վրայ իշխալով՝ զանոնք ալ առաւ մէկտեղ տարաւ: Սարդ է՝ նաւու սաստիկ ուժքնութեամբ անմիջապէս շին կուեցած: Բայց այնպիսի ցնցմանք մը, որ քըհանները քաշելը խիստ դժուարացաւ Գրեթէ ամէն բան ու բոլոր գործիքները օգնեանական են:

Կայսերուն կարուելուն վեց քառ օրոց
մը չանցած, զեկին բռնաստեղը կոստրեցա-
եւ նորոգելու զարած ատենինին՝ նոյն իսկ
դեկը բաժնուեցաւ ինկաւ: Այսպէսով
նաւուն վիճակն երթարով աւելի կը գէշ-
նար, եւ քիչ մը ետքը վերջնին աստիճանին
յուսահաստակն եղաւ: որոյիշետեւ նաւ-
ուն յարկին տախտակամածներն ալ բա-
ցուեցան:

Կաւուն բոլոր պաշարը, պաքցամանալը
խմելիքները, փայտն ու ածուխը, ամէն քան
ապականած էր: Բայց բարեգախտու-
թեամբ կրցան ջրէն քանի մը լիշ դնի եւ
շաքրազղի, քիչ մը ալեւը եւ երեք չորս
տակառ անոյշ ջուր ազատել: Աս փոքր
օգնութիւնը հանդիպ քիչ մը սփոփեց ու
նաևստեղ կենակը պահէց:

Պայտօնականնեմն ու ջրէան քաջլու-
չղլաղող նաւաստիք, բոլոր գիշերը՝ նաւ-
ուն ամենին աւելի վլունգաւոր վնասները
նորոգելու նետեւէ ինկան: Երկրորդ առ-
տու անանկ երեւցաւ որ օդը պարզ ու
խաղաղ պիտի ըլլայ: Իրօք ալ այնպէս
եղաւ: ուստի եւ նոր քաջարստութիւն
ստանալը՝ ամէնքն ալ սկսան իրենց ա-
զատութեան աշխատիլ:

Աշխել նառը նոյն առեն արտաքոյ կար-
գի տեսաբան մը կ ընծայէր . առանց կայմի
առանց զեկի նառու անձեւ կմախ մըն էր
որն սր Ովկիանոսին անբառ ընդարձակու-
թեան վրայ կը տատանէր : Նառուն չոր-
կողը տակառնէր, ամէն տեսակ պաշար
ալէաց վրայ կը ծփային, եւ ծովան երեսու
պարաններով, նառու կաղմանծքներով ու
չուաններով ծածկուած էր :

Գիշերը չկուսած՝ կրցած էին յառաջաւագ կողման կայսր Կանքնել ու նաև կառավարելու համար մերենայ մը դնել . այնպէս որ եթէ օգը չարուելու բլար, կրնայի յցա ունենալու Պրազիլիայի ճամփան նորեկ մանելու, ուսկից հօվին բռնութիւնն զիրենէ շատ հէսառուռած է:

Աս վրանակաւու ու աշխատալից ժամանակը՝ էրմէնգուուր սեպուհն ուրախութեամբ կը գփսէր որ Մերլիլ բօլորալին ուրիշ մնդր եղեր է . նոյն պատահն այն պիսի փութուուլ ու քաջարոսութեամբ կը գործէր, որ ոչ գժուարութիւն ու ոչ աշխատանք կրնացին զննքը վհատեցընել կամ ետ կեցնել: Խակ Փիլիպոս նոր սդու ու նոր ոյ կ'առնուուր տեսնելով թէ ինչ պէս նաւապետն իր լուս քաղցրութեամբ ու հաճութեամբ կը նայի:

Բոլոր պաշտօնակալներն ալ զարմացաւ
էին յամառ երիտասարդին այնպէս որ
խուելուն վրայ է ՚իր անցած վարժուանքին
ուրիշ բան մնացած չէր վկան, բաց ի հա-
ղէն կոմելին գէմ ունեցած ատելութեան
նէն, որն որ միշտ իր հոգին կը տանչէր ե-
յառաջնան պէս սաստիկ էր, ի վերա-
պար ամենայնի կոմմնի իրեն գէմ ըստ
թշնամնական պատճեռուն պատասխան չէ-
տար, ՚Նաւապէտին արդարութեան վկա-
վուահացած՝ լուսթեամբ կը համերեւէ-
րայց ՚իմանար որ վրէ ժիմնդրութեան բար-
ձանքը սրտին մէջ երթառու աւելի կ
.....